**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3**

**ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **17 օգոստոսի 2026թ.**

2026թ. օգոստոսի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ունեցավ հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/22-ՀՆՆ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Ֆարսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ պետը, |
| Դ. Սարգսյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը, |
| Ս. Մխիթարյանը՝ | ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Ֆարսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Ընթացակարգը՝ 69-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

## 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 69-ՐԴ ՉԱՓԱԲԱԺՆԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ Ընթացակարգի շրջանակում 69-րդ չափաբաժինի մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչված «ՏԷ ԷՍ ԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ ոչ ուշ քան 14.08.2026թ ներառյալ, գրավոր չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները և վերջիններս ներկայացնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում և կարգով eAuction.am համակարգում չի կցել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի, Կարգի 32-րդ կետի 13-րդ և 19-րդ ենթակետերի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 9.3.-րդ և 9.4.-րդ կետերի պահանջներով՝ «ՏԷ ԷՍ ԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

2. «ՏԷ ԷՍ ԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ՏԷ ԷՍ ԿԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին պայմանագիրն ստորագրելու իրավունքից զրկելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Պատվիրատուի ղեկավարին:

4. Ընթացակարգի 69-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:

5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարությունները հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Ֆարսյան ______________

*Հանձնաժողովի անդամ՝*

Դ. Սարգսյան ______________

Ս. Մխիթարյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ______________